

Խաչատուր Աբովյան

Պարապ վախտի խաղալիք

Առյուծն ու մոծակը

Խղճի վրա մի՛ ծիծաղիր,
Անճարին մի՛ վիրավորիր:
Խեղճ մարդն էլ շատ անգամ քեզ էնպես
Կկծի, որ կմնաս սևերես:
Քո գլխին շատ էլ մի՛ հավատար,
Լսի՛ր էս մասալեն, անկաշդ ա՛ռ:
Էսպես պատահեց, առյուծ թագավորն
Մոծակի սիրտը՝ խիստ խոցեց մեկ օր:
Մոծակ շահզադեն մարսիլ չկարաց,
Կռիվ բաց արեց՝ հաքված, հազրված:
Կռվողն էլ ինքն էր, շվի ածողն էլ,
Թոփն էլ վրեն հազիր, յարաղ, ասպաբն էլ:
Բզզալով թռավ թշնամու վրա:
Առյուծ փադիշահն հենց իմացավ, նա

Հանաք էր անում, վրեն ծիծաղեց,
Սայմիշ չարեց նրան, ու մնաց նստած:
Մոծակն ի՞նչ կաներ էս հալին հանաք:
Մեկ՝ թիկունքիցը, մեկ՝ անկաշ ու աչք
Սազ ածելով՝ նա ծակում էր դաղում,
Առյուծն եռալիս՝ վեր կենում, թոչում:

Էլ եդ վախտ, ֆոսանդ հենց որ ճարում էր,
Էլ եդ վեր գալիս, միսը պոկում էր:
Առյուծի ջանը որ շատ կրակ ընկավ,
Պոչովը դամշեց: Էլ եդ ճար չէլավ:
Ղոչաղ մոծակը արնի համն առած՝
Սիրտն էլ նեղացած՝ էնպես բարկացած,
Թուշ էկավ, նստեց ճակատի վրա,
Ա՛րինը ծծեց տզըրկի պես նա:
Անճար առյուծը շատ էլ զոռ արեց.
Յալը թափ տվեց, գլուխը շարժեց:
Բայց դու ո՛չ մեռնիս: Մոծակն իր քեֆին
Նստած՝ մեկ՝ քթին, դնչին, ականջին
Էնպես էր զարբում, որ հոգին հանեց:
Առյուծի ճարը հենց որ կտրվեց,
Պարկեց գետնի վրա, սկսեց դողալ,
Ջանն առել էր ցավն, ի՞նչպես լար իր հալն:

Դեմն ատամներն էր նա ղրճտացնում,
Դեմը գետինը չանգռում ու պոկում:
Գոռոցն ընկել էր մեշա, ձոր ու սար,
Թև, ոտ ունեցողն հո՝ սասանահար
Գլուխն առել, կորչում՝ լալով, դողալով:
Հենց բռնես մեշեն բռնած՝ կրակով
Վառվում ըլի, կամ ջրհեղեղ գալիս:
Նոր հասած ետին վերջը աշխարքիս:
Բայց ո՞ւմ հունարն էր էսքան դալմաղալ
Մոծակին, որ չի կարաց դիմանալ:
Առյուծն սկսեց գոռալ, մռնչալ,
Գետնի վրա չոքիլ, նրան մեղա գալ:
Խնդրեց, որ իրան հանցանքը բաշխի,
Ու մեջրները հաշտություն ընկնի:
Մոծակն առյուծի հալը տեսնելով,
Մեղքն էկավ, հաշտվեց, նրան ներելով:

Ջիգրը հանած ու սիրտը հովացած,
Թշնամուն էնպես քարովը տված,
Ընկավ սարեսար՝ ինքն իրան բերնով
Պատմեց իր արածն, գլուխը գովելով։—